

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՌԱՄԱՋՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ

«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԸ

ԵՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

**Ժ. 01.07 - «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Պետրոսյան Արմեն Եղիշեի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Զավենիծե Էլենե Բիծինայի
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հուլիսի 4-ին, ժամը 14:30-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. մայիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի

Գիտական

քարտուղար՝



Ա. Վ. Եզանյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

«Քյոոզլի» էպոսը XVII դ. ստեղծագործություն լինելով՝ թյուրքական մյուս էպոսների ու հերոսական ասքերի համեմատ իր տարածվածության տեսակետից աննախադեպ է: Ատենախոսությունը նվիրված է էպոսի և XVII-XX դդ. հայկական պատմագեղարվեստական արձագանքների քննությանը:

Ընդունված է էպոսի տարբերակները բաժանել արևմտյան և արևելյան խմբերի: Արևմտյան խմբի տարբերակները (թյուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դաղստանյան, քրդական ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան տարբերակին, որը XIX դ. սկզբին գրառվել է Իրանի Ատրպատական երկրամասում, արևելագետ Ա. Խոճկոյի կողմից¹:

Արևմտյան խմբի բոլոր տարբերակներում «Քյոոզլի» մականվամբ Ռուշանը հանպատրաստից բանաստեղծ-երաժիշտ (աշուր) է, որն իր նման վրիժառուների գլուխն անցած՝ վրեժ է լուծում հորը կուրացրած իշխանավորներից (այստեղից էլ «Քյոոզլի» մականունը, այն է՝ «կույրի որդի»), վարում Ռոբին Հուդի կարգի «ազնվաբարո ավազակին» բնորոշ կյանք՝ պատսպարվելով լեռնային Չամիլբել ամրոցում: Խմբի տարբերակները հիմնականում զերծ են առասպելական և հեքիաթախառն գծերից, ինչը վկայում է կայուն պատմական հիմքի առկայության մասին:

Արևելյան տարբերակներում (թյուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպակյան, Բուխարայի արաբների, տորբո-թաթարական, ույղուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձն ամբողջությամբ անհետանում է՝ իր տեղը զիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախախլամական տարրերով հավելված գրոյցների շարքին և իրանական առասպելաբանությանը²: Դրանցում Քյոոզլին (Գյոոզլին) պատերազմում է դևերի և վիշապների դեմ, արդարության խորհրդանիշ առասպելական Չանդրբիլ երկրի կառավարիչն է (ըստ էության, կելտական-բրիտանական բանահյուսության Արթուր թագավորի կարգի)³: Առասպելական-հեքիաթային է անգամ նրա ծնունդը. մանուկ Ռուշանը ծնվում է գերեզմանում, մոր թաղումից հետո, որտեղից էլ

¹ Chodzko A., Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea. London, 1842.

² Միջանկյալ մի օղակ է համարվել XX դ. 60-ական թթ. թյուրքագետ Լ. Չլաիճեի հայտնաբերած Ատրպատականի թյուրքերենով (թյուրքի) 28 մեջլիսից բաղկացած էպոսի տարբերակը («Թբիլիսյան ձեռագիր»): Խ. Կորոգլու կարծիքով, այն գրառվել է XIX դ. երկրորդ կեսին և ավելի մի հին ձեռագրի պատճեն է (Короглы Х., Взаимосвязи эпоса народов Средней Азии, Ирана и Азербайджана, М., 1983, с. 183): Պարսկերենի խիստ ազդեցությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն ևս Ատրպատականում է գրառվել:

³ Chadwick N., Zhirmunsky V., Oral Epics of Central Asia. New York, 2010, pp. 300-301.

արևելյան խմբի տարբերակների յուրահատուկ անվանումները՝ Գյոռոլլի, Գոռոլլի, Գուռոլլի, Գուրուզլի կամ Գուրզուլի (բառացի՝ «գերեզմանի որդի») ևն: Որոշ ազգային պատումներում սույն պատմությունը զուգակցվում է հերոսի հոր կուրացման հետ: Տաջիկական և թուրքմենական պատումների շարքը հինգ տարբեր անվանումներ ունի, որոնցից երեքը հանգում են «գերեզմանի որդի» տարբերակին, մեկը՝ «կույրի որդի» («Կուրուլլի»), իսկ մյուսը՝ «խուլի որդի» տարբերակին («Գարավլի»): Տաջիկական «Գուրուզլի» («Գուրզուլի») չափածո էպոսն իր ինքնօրինակ հորինվածքով առանձնանում է արևելյան խմբում, իսկ թուրքմենական տարբերակը («Գյոռոլլի») հետազոտողների մի մասը ևս ընդգրկում է վերոհիշյալ խմբում: Մյուսների կարծիքով, այն մի միջանկյալ օղակ է երկու խմբերի միջև՝ ընդհանուր գծեր ունենալով ինչպես տաջիկական, այնպես էլ ատրպատականյան տարբերակի հետ:

Էպոսի արևմտյան խմբի տարբերակների հիմքում ընկած պատմական գլխավոր իրադարձություններն առնչվում են XVI-XVII դդ. Օսմանյան կայսրությունը ցնցած ջալալիների պաստամբություններին, որոնք ծանր հետևանքներ են ունեցել կայսրության ժողովուրդների, հատկապես, հայության համար: Հայ մատենագրության էջերում առկա են բազմաթիվ հաղորդումներ ջալալիների արշավանքների մասին, ըստ այդմ, թեմայի ուսումնասիրությունն անհրաժեշտություն է առաջացնում հայկական պատմագեղարվեստական արձագանքների կարևորությունն ու եզակիությունը ներկայացնելու տեսանկյունից: Միայն հայկական աղբյուրների օգտագործմամբ է հնարավոր պատասխանել էպոսի ուսումնասիրությանն առնչվող կարևորագույն հարցերի:

Տվյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր սկզբնաղբյուրներն են XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու «Պարմութինը» («Գիրք պարմութեանց»), Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի) «Ժամանակագրութիւնը», Երեմիա Քյումուրճյանի «Պարմութին համառօր ԴՃ փարոյ Օսմանցոց թագատրացն» աշխատությունը, Ազարիա Սասնեցու ողբը («Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն եւ աշխարհին հայոց ի ձեռաց Ճելալեանց»), ինչպես նաև XVI-XVIII դդ. մանր ժամանակագրությունները: Ընդսմին, Քյոռոլլու և Նրա զինակիցների մասին հիշատակությունների հարցին անդրադառնալիս ուսումնասիրողները հայ մատենագիրներից մշտապես նշել են միայն Առաքել Դավրիժեցուն և XVIII դ. մատենագիր Եղիա Մուշեղյանին, այնինչ այդ կերպ անտեսվել են մանր ժամանակագրությունները, որոնք կարևոր և եզակի տեղեկություններ են պարունակում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ:

Թեման արդիական է էպոսի ընդհանուր և համապարփակ ուսումնասիրության տեսանկյունից: Հայկական պատմագեղարվեստական արձագանքների ուսումնասիրության և վերլուծության շնորհիվ ի հայտ են գալիս բազմազան նոր փաստեր, հնարավորություն է ստեղծվում առավել

խորքային հետազոտության ենթարկել թեման և լուսաբանել տարատեսակ հարցեր: Մյուս կողմից, միանշանակ հերքվում են օտար, մասնավորապես, թուրքական և աղբյուրներից շրջանակներից առաջադրված հակագիտական թեզերն, իբր, էպոսի հայկական տարբերակի չգոյության և հայկական մշակույթի նկատմամբ «*թուրք ժողովրդական գրականության ազդեցության*» մասին, որոնք վերջերս առավել ակտիվ են տարածվում, ըստ երևույթին, ընդհանուր հակահայ քարոզչության ծավալման շրջանակներում:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը

էպոսի գրառումից ի վեր հետազոտողներին մշտապես զբաղեցրել են դրանում արտացոլված իրադարձությունների և գործող անձանց, մանավանդ, Քյոռոզլու կերպարի պատմականության, էպոսի ձևավորման ժամանակաշրջանի և տարածաշրջանի հարցերը: Նմանօրինակ հարցեր քննարկվել են XIX դ. վերջի և XX դ. սկզբի բազմաթիվ հեղինակների աշխատություններում (Վ. Գորդլևսկի, Վ. Սմիռնով, Վ. Ռադլով, Ա. Կրիմսկի, Ի. Բերեգին, Ա. ֆոն Հաքստհաուզեն, Ի. Կունոշ, Է. Սոսսի, Օ. Շպից, Գ. Մեսարոշ, Ժ. Դյունեզիլ ևն)⁴, սակայն դրանք համապարփակ ուսումնասիրություններ չլինելով՝ լիովին չեն լուսաբանել վերը նշված հարցերը: Նախ, էպոսի տարբերակների գրառումն ամբողջությամբ չէր ավարտվել, ըստ այդմ, քննական վերլուծության էին ենթարկվում առանձին պատումներ և մշակումներ: Բացի այդ, հիմնականում հասանելի չէր պատմական-աղբյուրագիտական նյութը:

Ավելի ուշ՝ հիմնականում 1930-1940-ական թթ. նմանատիպ հարցերին անդրադարձած թուրք հետազոտողների (Մ. Ֆ. Քյոփրյույույ⁵ ևն) կողմից «Քյոռոզլին» դիտարկվել է որպես զուտ «թուրքական հանճարի» արտահայտություն, առաջ են քաշվել ծայրահեղ այլ հակագիտական տեսակետներ: Ընդամին, մի շարք այլ հեղինակներ (Փ. Ն. Բորաթավ⁶, Ա. Ս. Լևենդ⁷ ևն) բազմիցս նշել են էպոսի գլխավոր հերոսի կերպարի երկատման հարցը: Իբր, շփոթ առաջանալով՝ նույնացվել են XVII դ. ապրած երկու նույնանուն անձինք՝ ջալալի առաջնորդը և երաժիշտ-բանաստեղծը (աշուղ),

⁴ **Гордлевский В.**, Избранные сочинения. Том 1. Исторические работы. М., 1960; **Смирнов В.**, Очерки истории турецкой литературы, СПб, 1891; **Радлов В.**, Образцы народной литературы тюркских племен. Часть VIII, Наречия османские, тексты собраны И. Куношем, СПб, 1899; **Крымский А.**, История Турции и ее литературы. М., т. I, 1910, т. II, 1916; **Берзин И.**, Турецкая хрестоматия, т. II, СПб, 1862; **Гакстаузен А. фон**, Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийскими морями. М., 2018; **Kúnos I.**, Turkish Fairy Tales and Folk Tales, New York, 2012; **Saussey E.**, Littérature Populaire Turque. Paris, 1936; **Spies O.**, Türk Halk Kitapları, Istanbul, 1941; **Mészáros G.**, Köroğlu. Budapest 1913; **Dumézil G.**, Les légendes de “Fils d’aveugles” au Caucase et autour du Caucase: “Revue de l’Histoire des Religions”, Vol. 117, Paris, 1938, pp. 50-74.

⁵ **Köprülü M. F.**, XVI-ncı Asır Sonuna Kadar Türk Saz Şairleri. Evkaf Matbaası, İstanbul, 1930.

⁶ **Boratav P. N.**, Halk Hikâyeleri ve Halk Hikâyeciliği, Ankara, 1946, ss. 198-199.

⁷ **Levend A. S.**, Edebiyat Tarihi Dersleri (Tanzimata Kadar). Istanbul, 1941, s. 189.

կամ, իբր, իրականում գոյություն ունեցած բանաստեղծ Քյոռոզլուի ստեղծագործություններին են ծուլվել ռազմիկ-խոռվարար Քյոռոզլուի մասին այլ ասացողների հորինած առասպելներն ու երգերը: Թուրք բանասիրության մեջ հայտնի է նաև այլ կարծիք, ինչի համաձայն Քյոռոզլին XVI դ. վերջին ապրած երաժիշտ-բանաստեղծ է, սակայն հենց հերոսի բուն անունը հեքիաթային-առասպելական ծագում ունի և վաղնջական ժամանակներից հանրահայտ է եղել թուրքերի շրջանում: Իբր, հենց այդ տարածված անունն է վերցրել երաժիշտ-բանաստեղծը⁸:

Թեև նման իրարամերժ և հակասական կարծիքներ հայտնվել են խորհրդային շրջանի ուսումնասիրողների կողմից ևս (Ի. Պետրուշևսկի⁹ և այլք), սակայն հնարավորություն ունենալով վերահասու լինել պատմական (հիմնականում՝ հայկական) աղբյուրներին և օգտագործելով դրանք՝ լրացվել է այն բացը, որն առկա է հիշատակված հեղինակների գործերում: Սույն հանգամանքն էլ հենց թույլ է տվել կատարել և ամրագրել մի շարք եզրահանգումներ էպոսում արտացոլված պատմական իրադարձությունների, էպոսի ստեղծման և ձևավորման ժամանակաշրջանի, ինչպես նաև գլխավոր հերոսների պատմականության և այլ հարցերի վերաբերյալ:

Համեմատության համար նշենք, որ անհրաժեշտ բավականաչափ տեղեկություններ օտար աղբյուրներում չեն հանդիպում: Զալալիների ապստամբությունների մասին առատ տեղեկություններ են հաղորդում XVI-XVII դդ. օսմանյան պատմագիրներ Իբրահիմ Փեչևին, Մեհմեթ Սուլաքզադեն, Մուստաֆա Նախման, Քոչիբեյը, Քյաթիբ Չելեբին, սակայն Քյոռոզլու անունը նրանց անձանոթ է մնացել: Միայն XVII դ. օսմանյան պատմիչ Էվլիյա Չելեբին է իր ուղեգրություններում («Սեյահեթ-նամե») հաղորդում Քյոռոզլու մասին որոշ տեղեկություններ, որոնք աղոտ ակնարկներ լինելով՝ բազմաթիվ թյուր մեկնաբանությունների տեղիք են տվել: XVII դ. երկրորդ կեսին պատահած դեպքերի առթիվ պատմիչը հիշատակում է նշանավոր աշուղ-բանաստեղծ Քյոռոզլուն՝ առանց նշելու, սակայն, թե երբ է նա ապրել և ստեղծագործել: Մասնավորապես, խոսելով ջալալի առաջնորդ Հասան-փաշայի մոտ գտնված և Ուշաքից սերող Իթաքի անվամբ բանաստեղծի մասին՝ Էվլիյան նշում է. «Երգեր էր հորինում և նվագում [չոնգուր] գործիքով Քյոռոզլուց ոչ վապ»¹⁰: Քյոռոզլուն զուտ անվանապես, որպես նշանավոր ավազակի, Էվլիյան հիշատակում է մեկ այլ առիթով, ընդամին, ակնհայտ է, որ Քյոռոզլին որպես «հայդուօ» (ավազակ) է հոչակված եղել: Հայտնի են 1665 թ. ապրիլին Ստամբուլից Վան ճանապարհորդելու ընթացքում, Չերքեշի շրջանում (ներկայիս Չանքըրըլի մոտ) իրեն կողոպտած ավազակապետին ուղղված

⁸ Карпов Б., Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов. М. 1968, с. 79-80.

⁹ Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Л., 1949, с. 328.

¹⁰ Boratav P. N., Köroğlu Destanı. Ankara, 2016, s. 159.

Էվլիյայի խոսքերը. «Այն, ինչ որ դուք եք անում, նույնիսկ Քրիստոսը չի արել այս կողմերում»¹¹: Ամեն դեպքում վկայված է Քրիստոսը երգերի հեղինակ լինելը, սակայն որևէ հիշատակություն «դեստանի» մասին չկա:

Առավել արժանահավատ և վավերական պատմական աղբյուրներ են օսմանյան պետական արխիվներում պահվող և XVI դ. վերջով թվագրվող փաստաթղթերը (Mühimme Defterleri), որոնք հիմնականում հրամանագրեր են և նահանգային իշխանությունների զեկույցներ: Մասնավորապես, 1579-1581 թթ., 1588 թ. և 1593-1595 թթ. Բոլիի, Գերեղեի, Իչելի, Կարամանի և կայսրության ասիական այլ շրջանների պաշտոնյաներին ուղղված հրամանագրերում նկարագրվում են Քրիստոսը և նրա գործակիցների ավազակային գործողությունները, նշվում դրանց վերացման և Քրիստոսը ձերբակալման անհրաժեշտությունը: Շեշտվում է, որ Քրիստոսը Ռուշեն ավազակը քարավաններ է կողոպտել, պատանիներ առևանգել, ինչը միանգամայն համահունչ է էպոսի բովանդակությանը¹²: Փաստաթղթերից հետևում է, որ Քրիստոսը ակտիվ է եղել, հատկապես, Բոլու և Գերեղե շրջաններում: Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ Իրանի հետ պատերազմի ընթացքում Քրիստոսը 200 հոգանոց հրոսակախմբով ավազակային գործողությունների է դիմել¹³: Բազմիցս հիշատակվում է նաև Քրիստոսը գործակից Գզիրոլլի Մուստաֆան, որպես Մալաթիայի և Սեբաստիայի միջև գործած ավազակապետ, ինչը վկայված է հայ պատմագրության էջերում ևս¹⁴: Ընդհանրապես, օսմանյան արխիվների ուսումնասիրության արդյունքներով, Քրիստոսը և Գզիրոլլի Մուստաֆան համարվում են նախաջալախական շրջանի ավազակապետեր, որոնք անհնազանդություն են ցուցաբերել մինչև բուն ջալախական ապստամբությունները՝ 1582-1584 թթ.:

ԽՍՀՄ օրոք հնարավորություն ունենալով որոշակիորեն վերահասու լինել այդ և խնդրո առարկա հայկական աղբյուրների մի մասին՝ էպոսի խոշորագույն հետազոտողներից Բ. Կարրիևը և Խ. Կորոզլին կարողացել են մասամբ լրացնել բացը: Ըստ այդմ, ուսումնասիրության ընթացքում մեր կողմից օգտագործվել են Բ. Կարրիևի հիմնարար աշխատությունը («Քրիստոսը մասին էպիկական ասքերը թյուրքալեզու ժողովուրդների մոտ»), Խ. Կորոզլու աշխատություններն ու տարբեր տարիների առանձին հրատարակումները:

Խնդրո առարկա հարցերի լուսաբանման գործում մեծ ներդրում է ունեցել թուրք բանասեր Ն. Փ. Բորաթավը, որի կողմից գրառվել են Թուրքիայի

¹¹ Նույն տեղում, էջ 198:

¹² **Boratav P. N.**, L'épopée et la "hikaye": "Philologiae Turcaeae Fundamenta". T. 2, pp. 11-44, Wiesbaden, 1965, p. 26; **Sümer F.**, Köroğlu, Kiziroğlu Mustafa ve Demircioğlu İle İlgili Vesikalar: "Türk Dünyası Araştırmaları", Şubat, İstanbul, 1987, ss. 9-46; **Короглы X.**, Туркменский эпос "Гёр-оглы" и особенности его историзма. М. 1973, с. 144.

¹³ **Akdağ M.**, Türk Halkının Dirlık ve Düzenlik Kavgası. "Celali İsyarıları". İstanbul, 1995, ss. 265, 298.

¹⁴ **Aslanoglu I.**, Kiziroğlu Mustafa Bey: FÜ Fırat Havzası Folklor ve Etnografya Sempozyumu, 24-27 Ekim 1985. Elazığ, 1992, s. 7.

տարածքում տարածված էպոսի տարբերակները, իրականացվել է դրանց համեմատական վերլուծություն: Ըստ այդմ, օգտագործվել են թեմայով Բորաթավի հիմնական աշխատությունը (“*Köroğlu Destanı*”) և առանձին հրապարակումներ: Հատկանշական է, որ թեմայի նկատմամբ Թուրքիայում ուշադրությունը երբեք չի մարել, ուսումնասիրություններն ընթացել են հետևյալ ուղղություններով.

- *Թուրքիայի պեպական արխիվներում պահպանվող օսմանյան շրջանի գրագրության վերծանում և վերլուծություն,*
- *Թուրքիայի փարածքում նոր փարբերակների և առանձին պատումների գրառում,*
- *Արտերկրի թյուրքալեզու ժողովուրդների շրջանում փարածված փարբերակների ուսումնասիրում:*

Ատենախոսության մեջ օգտագործվել են ոչ միայն թյուրքական (թյուրքական) բանահյուսության ուսումնասիրությունների նյութերը, այլև վերջին շրջանի թյուրք բանասերների աշխատանքները, էպոսի ուսումնասիրությունների հարցերին նվիրված գիտաժողովների նյութեր:

էպոսում պահպանված «կույրի որդու» առասպելույթի առնչությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ժ. Դյումեզիլի հայտնի տեսությունը, որը հայ բանասիրության մեջ զարգացվել է Հ. Պերպերյանի, Ա. Ահյանի և Ա. Պետրոսյանի կողմից (ստորև՝ մանրամասն):

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է առկա նյութերի հիման վրա վերլուծել «Քյոռոջլի» էպոսի սյուժետային գծերը, կերպարները, վերհանել գործող անձանց պատմական նախատիպերի և դրվագների առնչությամբ պատմագեղարվեստական արձագանքները: Ելնելով վերոհիշյալից՝ մեր առջև դրել ենք ներքոհիշյալ խնդիրները.

- *Ներկայացնել խնդրո առարկա ուսումնասիրության հարցերի վերաբերյալ թյուրքական (թյուրքական) բանասիրության մոտեցումները,*
- *Վերլուծել XVII-XVIII դդ. հայ պատմագրության հաղորդումները, ընդհանրապես, հայկական պատմագեղարվեստական արձագանքները, համադրել դրանք օսմանյան պեպական արխիվներից և այլ աղբյուրներից մինչ այժմ հայտնի դարձած նյութերի հետ,*
- *Վերլուծել էպոսի կազմության գործում հայկական ազդեցության դրսևորումները՝ հանձինս հայկական կերպարների և որոշ դրվագների, համադրել դրանք թյուրքական (թյուրքական) բանասիրության շրջանակներում առկա տեսակետների հետ,*
- *Հիմնավորել էպոսի հայկական փարբերակի գոյությունը, առկա պատմագեղարվեստական նյութի հետ համադրությամբ,*
- *Վերհանել հայկական պատմագեղարվեստական արձագանքների տեղն ու դերն էպոսի ուսումնասիրության գործում:*

Ատենախոսության մեթոդաբանությունը

Ատենախոսությունը շարադրվել է առկա պատմագրական և բանասիրական նյութերի հետազոտման վերլուծական-համադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդների կիրառմամբ, որոնք ինքնաբերաբար ենթադրում են բազմակողմանի քննական վերլուծություն համապատասխան եզրակացություններով: Տվյալ մեթոդաբանության կիրառմամբ թեմայով առկա պատմագեղարվեստական արձագանքներն առաջին անգամ ենթարկվել են համակողմանի ուսումնասիրության և վերլուծության:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունն առաջին փորձն է հնարավորինս համակողմանի և ամբողջական կերպով ներկայացնել «Քյոռոլլի» էպոսը և հայկական պատմագեղարվեստական արձագանքները, որոնք, ընդհանրապես, կարևորվում են էպոսի ուսումնասիրության տեսանկյունից: Օգտագործվել են զգալի թվով սկզբնաղբյուրներ և նյութեր, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ կամ դիտարկվում նոր լույսի ներքո: Ընդամին, փորձ է արվում լրացնել հայկական պատմագեղարվեստական արձագանքների ուսումնասիրման առումով առկա բացը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսությունը կարող է կիրառական նշանակություն ունենալ, ընդհանրապես, էպոսի ուսումնասիրության առումով, դրան նվիրված հետազոտ բանասիրական, աղբյուրագիտական և պատմագիտական աշխատանքներում: Այն ամբողջապես կամ մասնակի կարող է օգտագործվել ԲՈՒՀ-երում, մասնագիտական ֆակուլտետներում արևելյան (թյուրքական) գրականության համապատասխան դասընթացներում և դասագրքերում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, 17 ենթագլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու նպատակները, տրված է թեմային վերաբերող օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ Ի. «ՔՅՈՒՐԼԻ» ԷՊՈՍԸ ԵՎ XVII դԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ: Բաղկացած է 5 ենթագլխից:

Ինչպես արդեն նշվել է, էպոսի արևմտյան խմբի տարբերակների հիմքում ընկած պատմական իրադարձություններն առնչվում են XVI-XVII դդ. ջալալիների ապստամբություններին, որոնց մասին առկա և էպոսին առնչվող օսմանյան հաղորդումները քննվում են հայկական պատմագեղարվեստական արձագանքների հետ համադրմամբ: Նմանապես քննվում են թեմային առնչվող թուրքական պատմաբանասիրական նյութերը, հատկապես,

Քյոոզլու և Գզիրոլլի Մուստաֆայի մասով (Փ. Ն. Բորաթավ, Մ. Աքդադ, Ֆ. Սյումեր, Ի. Ասլանօղլու ևն): Հայկական պատմագեղարվեստական արձագանքների հետ առանձնակի կերպով համադրվում են էպոսի զույգ խմբերի տարբերակների հետաքրքրություն ներկայացնող հատվածները:

Առաջին ենթազվյում ներկայացվում են Առաքել Դավրիժեցու հաղորդումները, ընդհանրապես, ջալալիների ապստամբությունների, դրանց առաջնորդների, ներառյալ Քյոոզլու և էպոսի մյուս կերպարների պատմական նախատիպերի (Գզիրոլլի Մուստաֆա, Քոսա Սաֆար, Թանդրի Թանըմագ, Ջընջիլդան ևն) մասին: Դավրիժեցու համառոտ վկայությունը՝ «այս այն Քոռոլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշդներն եղանակեն»¹⁵, ուսումնասիրողներին սկզբնապես հնարավորություն է տվել հաստատելու Քյոոզլու իրական պատմական անձ լինելը: Սա միաժամանակ պատմագրության մեջ Քյոոզլու մասին մեզ հայտնի հնագույն հիշատակությունն է: Արժեքավոր է նաև վկայությունը Գզիրոլլի Մուստաֆայի մասին, որի՝ Քյոոզլու զինակից լինելն ի տարբերություն էպոսում գլխավոր հերոսի հետ հանդես եկող մյուս ապստամբ առաջնորդների՝ նշվում է ուղղակի («սա ևս ընկեր է Քոռոլյն»)՝¹⁶: Պատմիչը հստակ նշում է նաև նրա զորքերի քանակը («Ռ. {1.000} մարդ»)՝¹⁷, ինչպես նաև փաստը, որ Քյոոզլին շատ տեղերում իր խաղերի մեջ հիշատակում է նրան:

Երկրորդ ենթազվյում ներկայացվում են Ավետիք Տիգրանակերտցու հաղորդումները, որոնք ևս վերաբերվում են էպոսի կերպարների պատմական նախատիպերին: Նա ևս նշում է ապստամբ Քյոոզլու աշուղ լինելը, Գզիրոլլի Մուստաֆայի՝ նրան ընկեր լինելը, Քոսա Սաֆարի ապստամբելու միևնույն տարեթիվը (1599 թ.), հաստատում ջալալի առաջնորդներից Թանդրի Թանըմագի պատմականությունը¹⁸: Ըստ այդմ, միայն Դավրիժեցին չէ վկայում տվյալ իրողությունների մասին:

Երրորդ ենթազվյում քննարկվում են մեր թեմային առնչվող Գրիգոր Դարանաղցու և մանր ժամանակագիրների հաղորդումները, օսմանյան և այլ աղբյուրների հետ համադրությամբ: Կարևորվում է Դարանաղցու եզակի, մանրամասն վկայությունը Գզիրոլլի Մուստաֆայի մասին, ցույց է տրվում 1590 թ. Եկեղյաց գավառում տեղի ունեցած քրդական խժոժությունների անմիջական կապը թեմայի հետ¹⁹: Առանձնակի ընդգծվում է էպոսում տվյալ մասով առկա սյուժետային գիծը: XVII դ. մանր ժամանակագիրներից

¹⁵ **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ. Խանլարեանի, Երևան, 1990, էջ 108:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. {ՄԺ}, կազմեց Վ. Հակոբյան, հտ. Բ, Երևան, 1956, էջ 517:

¹⁹ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 32-33:

ներկայացվում են Հակոբ քահանա Կարնեցու, Վարդան վարդապետ Բաղիշեցու և այլոց համառոտ հաղորդումները թեմայով²⁰:

Չորրորդ ենթազվխում ներկայացվում են Ազարիա վարդապետ Սամնեցու հաղորդումները ջալալիների առաջնորդների և նրանց ասպատակությունների մասին: Առավել հետաքրքրություն է ներկայացնում Քոսա Սաֆարի մասին հատվածը, ինչը հաստատվում է նաև օսմանյան պատմագրության տվյալներով²¹:

Հինգերորդ ենթազվխում քննարկվում և վերլուծվում են XVII դ. մշակութային գործիչ Երեմիա Քյոմուրճյանի՝ թեմային վերաբերող հաղորդումները, որոնք ամփոփված են 1675-1678 թթ. գրված «Պատմութիւն համառօր ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն» չափածո պատմական երկում²²: Ուշագրավ է պատմագրի հիշատակությունը Թյուրքչեբիլմեզ (բառացի՝ «թուրքերեն չիմացող») ջալալի առաջնորդի մասին²³, որի վերաբերյալ մեկ այլ վկայության ենք հանդիպում միևնույն երկում և Դավրիժեցու մոտ: Առանձնակի քննարկվում է Քյոմուրճյանի վկայությունը ջալալիների գործունեությանը հավատարաց հայերի մասնակցության մասին:

Խնդրո տարակա բոլոր հաղորդումները համեմատվում և համադրվում են էպոսի տարբերակների համապատասխան հատվածների, թուրք բանասիրության և այլ առկա ուսումնասիրությունների հետ:

ԳԼՈՒԽ II. «ՔՅՈՐՈՂԻ» ԷՊՈՍԸ ԵՎ XVII ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏ-ՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ: Բաղկացած է 3 ենթազվխից:

Առաջին ենթազվխում մանրամասն ներկայացվում և վերլուծվում են XVIII դ. մատենագիր Եղիա Մուշեղյանի (Եղիա Կարնեցի) հաղորդումները Քյոռօղլու մասին, որոնք արձանագրված են 1721 թ. Թավրիզում նրա գրառած «Գիրք խաղից երաժշտականաց» տաղարանում²⁴: Թեև Եղիան ավելի ուշ շրջանի հեղինակ է, սակայն համեմատաբար ավելի ընդարձակ տեղեկություններ է հայտնում Քյոռօղլու վերաբերյալ, քան հիշատակված բոլոր հայ մատենագիրները: Առավել արժեքավոր է «Ամունք Քոռօղլուն» հատվածը²⁵, որում Եղիան ամփոփ կերպով արձանագրել է Քյոռօղլու վերաբերյալ շրջող պատմությունները, որոնք հիմնականում համընկնում են հետագայում գրառված գրույցների և, ընդհանրապես, էպոսի հիմնական

²⁰ ՄԺ, հտ. Բ, էջ 268-269, 394:

²¹ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հտ. Ա, Երևան, 1974, էջ 341-346:

²² **Երեմիա Քեօմիւրճեան**, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրութեամբ Ժ. Աւետիսեանի, Երևան, 1982, էջ 167-170:

²³ Նույն տեղում, էջ 184:

²⁴ Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն, Երևան, 1941, էջ 11-12, **Աբրահամյան Ա., Գաբրիելյան Դ.**, Քյոռ-օղլու նորահայտ երգերը, ՀՍՍՌ ԳԱ ՏՀԳ, թ. 9, Երևան, 1954, էջ 71-93:

²⁵ Նույն տեղում, էջ 72-74:

սյուժետային գծի հետ: Առանձին ուշադրության են արժանի Քյոոզլու 13 խաղերը, որոնք համարվում են մեզ հասած Քյոոզլու տեքստերի առաջին և հնագույն նմուշները: Ներկայացվում են հայատառ թուրքերեն (թյուրքի) տեքստերից թարգմանված որոշ խաղեր, որոնք իրենց փոփոխակներով հասել են մինչև մեր օրերը, տեղ գտել թուրքմեն բախշիների և աղբրեջանցի աշուղների երգացանկում: Տաղարանն իր հարակից մեկնաբանություններով ցայսօր էլ համարվում է Քյոոզլու մասին պատմություններ և երգեր պարունակող տեքստերից հնագույնը: Քյոոզլու մասին տեքստերի գրառումն ու ուսումնասիրությունն սկզբնավորվում է հենց նրանով:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են XVIII դ. մանր ժամանակագրությունների հակիրճ տեղեկությունները: Մասնավորապես, բնորոշ սեղմ ժամանակագրական ոճով հիմնականում կրկնվում են նախորդ գլխում մեջբերված հաղորդումները պատմական Քյոոզլու և նրա զինակից Գվիրոլլի Մուստաֆայի մասին: Նման հաղորդումներ են առկա Ղևոնդ Տոսպեցու²⁶, Անանուն Վանեցու²⁷, Հարություն քահանա Խալֆայանի²⁸ տարեգրություններում և «Երուսաղեմի ժամանակագրության»²⁹ մեջ:

Երրորդ ենթագլխում ներկայացվում են թեմային առնչվող XVIII դ. հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի (1726-1809 թթ.) հիշատակությունները 1792 թ. Լոդոնում հրատարակված ինքնակենսագրական երկում: Էմինը ծանոթ է եղել Քյոոզլու զրույցերին, հիշատակում է Քյոոզլուն և մեջբերում նրա թուրքերեն խաղերից³⁰: Սա մեկ անգամ ևս հաստատում է, որ, մասնավորապես, Արցախում և հարակից տարածքներում Էմինի օրոք Քյոոզլու խաղերը բավականին տարածված էին և ժողովրդականություն էին վայելում:

ԳԼՈՒԽ III. «ՔՅՈՈԶԼԻ» ԷՊՈՍԸ ԵՎ XIX-XX ԴԱՐԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ: Բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին ենթագլխում ընդհանուր տեղեկատվություն է տրվում էպոսի հայկական տարբերակների ու պատումների մասին: Դրանցից հայտնի են Վանի, Մոկսի, Բաշկալայի, ինչպես նաև Արևելյան Հայաստանում (Արտաշատ, Վայք, Կոտայք, Վաղարշապատ) տարբեր ասացողներից XX դ. սկզբին գրառված տասնյակ տարբերակները: Ամբողջական մի տարբերակ Ուրմիայի

²⁶ Դիան հայոց պատմութեան {ԴՀՊ}, գիրք Ժ, Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, հրատարակեց Գիտ քահ. Աղանենց, Թիֆլիս, 1912, էջ 502:

²⁷ ՄԺ, հտ. Ա, Երևան, 1951, էջ 355:

²⁸ ԴՀՊ, էջ 124: Հմմտ. ՄԺ, հտ. Բ, էջ 482:

²⁹ Ժամանակագրություն (XI-XVIII դդ.), տպագրության պատրաստեց Նորայր եպս. Պողարյան, Բանբեր Մատենադարանի, թ. 9, Երևան, 1969, էջ 278:

³⁰ Life and Adventures of Emin Joseph Emin 1726-1809. Written by Himself (Second Edition), Calcutta, 1918, p. 302; 410. Հմմտ. Հովսեփ Էմին, Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Երևան, 2018, էջ 327, 409:

բարբառով 1912 թ. Արտաշատի Ազատական գյուղում գրի է առել բանասիակաք Գեղամ Թարվերդյանը, որը հրատարակվել է 1941 թ., ազգագրագետ Խաչիկ Սամուելյանի ծավալուն առաջաբանով («Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն»): Մնացած մի քանի տասնյակ զանազան բարբառներով գրառվածներն անտիպ են:

Հրատարակված միակ տարբերակը բաղկացած է 46 թեմատիկ գլուխներից, այն իրական ժողովրդական ստեղծագործության մի նմուշ է, անկրկնելի բարբառային լեզվով, որն իր հերթին ստեղծում է յուրահատուկ ազգային միջավայր: Անկախ ակնառու բովանդակային ընդհանրություններից՝ տարբերակն իրավամբ կարելի է համարել հայ բանահյուսության եզակի հուշարձան:

Եթե արևմտյան խմբի հիմնական տարբերակներում Քյոռօղլին ծագումով թուրքմեն է (թեքե ցեղից), ապա մյուսներում պատկերը բոլորովին այլ է: Այս տեսակետից կարևոր է Վանա բարբառով տարբերակը, որում գործող անձինք և գործողության վայրերը հայկական են: Արցախում ևս տարածված են եղել զրոյցներ Քյոռօղլու մասին, որոնք գրառվել են 1963-1964 թթ.³¹: Դրանցում կրկին շեշտվում է հերոսի հայկական ծագումը:

Տարբեր աղբյուրների հաղորդումների համադրումից ակնհայտ է, որ գոյություն է ունեցել նաև հերոսի անվան տարնմանեցմամբ հայկական տարբերակը՝ «Խորոզլի» կամ «Խորօղլի» անվամբ, ճիշտ նույն կերպ, ինչպես թուրքմենական և ուզբեկական «Գորոզլին», տաջիկական «Գուրուզլին» («Գուրուզլի»):

Երկրորդ ենթազվյում ներկայացվում են էպոսի հայտնի գրական մշակումները, այն է՝ Ռափայել Պատկանյանի «Քյոռօղլու» («Քյոռօղլու վիպասանություն») անավարտ պոեմը (1859 թ.), Ղազարոս Աղայանի 1887-1893 թթ. Թիֆլիսում հրատարակված «Արկածներ Քյոռօղլու կյանքից» շարքը: Երկու հեղինակն էլ Քյոռօղլուն վերագրում են հայկական ծագում, նմանապես ներմուծվել է որոշ հայկական միջավայր: Առանձնակի տեղ են գրավում Աղայանի հեղինակած Քյոռօղլու երգերը, Աղայանն ինքը հայտնի է եղել իր իսկ «հայացրած» Քյոռօղլու երգերով:

Քյոռօղլու թեմային նոր ժամանակներում անդրադարձել է բանաստեղծ Սարմենը, 1974 թ. հրատարակված «Քյոռօղլի» պոեմում³²: Քննական վերլուծությունից ակնհայտ է, որ մշակման հիմքում ընկած է Ուրմիայի բարբառով գրառված և միակ հրատարակված հայկական տարբերակը:

Երրորդ ենթազվյում ներկայացվում են XIX դ. վերջից և XX դ. սկզբից հայտնի աշուղական փոխադրությունները, մասնավորապես, Ջամալիի (Մկրտիչ Տայան) և Խայաթի (Սուքիաս Ջահրիյան), որոնք 1897 թ. և 1904 թ.

³¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. VII (Արցախ և Սյունիք), էջ 178-180, 185-190:

³² Սարմեն, Քյոռօղլի (պոեմ), Երևան, 1974:

հրատարակվել են Թիֆլիսում, 1900 թ. և 1910 թ.³³ Ալեքսանդրապոլում³³: Աշուղական նյութերը համեմատվել և համադրվել են թուրք բանասիրության նյութերի հետ: Ընդհանուր առմամբ, «Քյոոզլու հեքիաթները» ոչ միայն ուղղակի թարգմանվում էին, այլև որոշակիորեն հայացվում, մասնավորապես, տեղանունների, անձնանունների և որոշ դրվագների ներմուծմամբ: «Քյոոզլին» կենտրոնական տեղ է գրավել հայ աշուղների երգացանկում, և նրանք մասնակցել են էպոսի հետագա ձևավորմանը:

Արևմտահայության շրջանում ավելի վաղ արձանագրվել են հայատառ թուրքերենով հրատարակություններ: Տարբեր տպարաններում 1865-1875 թթ. 5 գրքի հրատարակության փաստը վկայում է արևմտահայության և, մասնավորապես, թրքախոս հայ հանրության շրջանում Քյոոզլու թեմայի տարածվածության մասին: Եթե Օսմանյան կայսրության սահմաններում արևմտահայության համար նախապատվություն է տրվել հայատառ թուրքերեն հրատարակություններին, ապա Արևելյան Հայաստանում դրանք փոխադրվել են հայերենի՝ որոշ տարրերի տեղայնացմամբ:

Չորրորդ ենթազվյում ներկայացվում են հայտնի անդրադարձները հայ գրականության և երաժշտության մեջ, որոնք համադրվում են թուրք բանասիրության առկա նյութերի հետ: Ընդհանրապես, հայ իրականությանը Քյոոզլու թեման ժամանակին բավական քաջածանոթ է եղել, դրան անդրադարձել են ժամանակի զգալի թվով հայտնի հայ գրողներ ու արվեստագետներ (Խ. Աբովյան, Պ. Պոռչյան, Մ. Նալբանդյան, Բաֆֆի, Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Ա. Բասիկյան, Շիրվանզադե, Դ. Դեմիրճյան ևն): Քյոոզլու ծիու ծագման մասին մի պատում է հրատարակել Պ. Պոռչյանը «Հացի խնդիր» վեպում:

Քյոոզլու թեման բավական երկար ժամանակահատված և զանազան ձևերով դրսևորվել է նաև հայ երաժշտության մեջ, հայկական պատումների և մշակումների առանձին մասեր երգվել են: 1875 թ. գրված Տիգրան Չուխաջյանի «Լեբլեբիջիներ» օպերետի հայտնի խմբերգի թուրքերեն սկզբնական վերնագիրը եղել է «*Մենք Քյոոզլու զավակներն ենք*»: Կոմիտասը դեռևս XIX դ. վերջին գրառել է «*Ա՛յ, Քյոոզլի, ջա՛ն Քյոոզլի*» տողով սկսվող երգի նախնական տարբերակներից մեկը, որը հետագայում գրառվել և մշակվել է Քրիստափոր Քուշնարյանի և այլ երգահանների կողմից: Միևնույն երգն Արամ Խաչատրյանի մշակմամբ տեղ է գտել 1935 թ. նկարահանված «Պեպո»

³³ Քոոզլու հեքիաթը. Գգիր Օլլիու {Օլլու} եւ Պօլի Բէկի հետ պատահած անցքերը: Փոխադրեց Կրակերէնից հայերէն Մկրտիչ Տալեանց Աշըզ Ջամալին, Մասն առաջին, Թիֆլիզ, 1897: Պօլի-Բէզ (Քեոո-Օլլու հեքեաթներից մէկը): Տաճկերէնից փոխադրեց երգիչ Խայաթը: Աղեքսանդրապօլ, 1900: Քոոզլու հեքիաթը. Դամրջօլլու եւ Համզա-Բէկի հետ պատահած անցքերը: Փոխադրեց Կրակերէնից հայերէն Մկրտիչ Տալեանց Աշըզ Ջամալին, Մասն երկրորդ, Տիֆլիս, 1904: Հասան Փաշայի հեքեաթը (Քեոոզլու հեքեաթներից մէկը): Փոխադրեց Տաճկերէնից Սուքիաս Չահրիեան (Խայաթ), Ալեքսանդրապօլ, 1910:

առաջին հնչյունային հայկական ֆիլմում: Նման ժողովրդականության պայմաններում, ընդհանրապես, հայկական պատումները հիմք են դարձել Արմեն Տիգրանյանի համանուն անավարտ օպերայի համար: Առկա տվյալներով, վերջինս ևս ընթացել է էպոսի «հայացման» ճանապարհով:

ԳԼՈՒԽ IV. ՀԱՅՎԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ: Բաղկացած է 5 ենթագլխից:

Էպոսի գրառման ժամանակահատվածից սկսած հայ և օտարազգի ուսումնասիրողների կողմից բազմիցս մատնանշվել է ակնհայտ դրսևորված հայկական ազդեցությունը նրա նկատմամբ, ինչն արտահայտվում է, մասնավորապես, պատմական ենթաշերտն առավելապես պահպանած արևմտյան խմբի տարբերակներում հայկական վիպական ավանդույթի տարրերի, հայազգի կերպարների և որոշ դրվագների առկայությամբ: Վերոհիշյալը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, այն է.

- *Էպոսի պատմական հիմք հանդիսացած ջալալիական ապստամբությունների՝ հայկական և հայաբնակ փարածքներում ծավալված լինելը,*
- *Հայոց վիպական ավանդույթի կենսունակությունն անգամ փարածաշրջանի ժողովրդագրական դիմագծի փոփոխությունից հետո,*
- *Թուրքալեզու հայ աշուղների մասնակցությունն էպոսի կազմավորմանն ու ձևավորմանը:*

Էպոսի տարբերակների քննական-համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ հայկական և ընդհանուր հնդեվրոպական տարրերի ներմուծումը թուրքական և մասամբ թյուրքական վիպական ավանդույթի մեջ իրականացվել է «հայկական խողովակներով»: Նման պայմաններում տրամաբանական է նաև հայազգի կերպարների առկայությունը, ինչը բնորոշ է պատմավավերական ատաղձը պահպանած արևմտյան խմբի տարբերակներին և, հատկապես, թուրքական և Թուրքիայի տարածքում մինչ այժմ գրառվող պատումներին: Արևելյան խմբի տարբերակներում հայկական կերպարներն արդեն ստանում են ընդհանուր քրիստոնեական կամ կովկասյան գունավորում, ինչն առավել դրսևորվում է Կենտրոնական Ասիայում տարածված տարբերակներից համեմատաբար էպոսի պատմական տարրերը պահպանած թուրքմենական «Գյոռոզլու» ամենատարբեր պատումներում: Ընդհանրապես, հայկական ենթաշերտն առանձին կերպարների առկայությամբ կարող էր ներթափանցել ներքոհիշյալ հանգամանքներով պայմանավորված.

- *Հայկական վիպական ավանդույթի ներմուծում թյուրքական բանահյուսություն,*
- *Էպոսի արևմտյան խմբի և, հատկապես, թուրքական փարբերակների կազմության ու ձևավորման ժամանակահատվածում (XVI դ. վերջ և XVII դ. սկիզբ) արձանագրված պատմական իրադարձությունների ազդեցություն:*

Վերջին հանգամանքով է պայմանավորված հայ վաճառականի (Բեգիրգեն) և Քյոռոզլու որդեգիր Այվազի կերպարների առկայությունն էպոսի զույգ խմբերի տարբերակներում, ինչը հստակ կապակցվում է խնդրո առարկա ժամանակահատվածում հայ վաճառականության խաղացած եզակի միջազգային դերակատարությանը և ջալալիական ապստամբությունների ընթացքում դրսևորված վայրագություններին:

Ընդհանուր հետաքրքրություն է ներկայացնում համանման վիպական տարրերի առկայությունը, մասնավորապես, «Քյոռոզլու» և «Սասնա ծռեր» էպոսի զանազան տարբերակների ու պատումների միջև: Թուրքմենական ցեղերի երկկողմ միգրացիան հաշվի առնելով՝ ենթադրելի է, որ Հայկական լեռնաշխարհում տարածված վիպական սյուժեները Կենտրոնական Ասիա կարող էին հասնել հենց «թուրքմենական խողովակներով»: Վերջին ուսումնասիրությունների արդյունքներով, ընթացել է երկկողմ փոխհարստացման գործընթաց: Ընդամին, «Քյոռոզլի» էպոսից «Սասնա ծռերի» զանազան պատումներ են ներմուծվել որոշ կերպարներ (Զընճիլ Խըռան, Քաշալ Համզա):

Ընդհանրապես, թեև էպոսն ուշ միջնադարի ստեղծագործություն է, սակայն պարփակում է բազմաթիվ վաղնջական շերտեր ու հնագույն առասպելաբանական տարրեր, որոնցից ցայտուն են արտահայտված «կույրի որդու» առասպելույթը և ծիու պաշտամունքը: Էպոսում դրանք փոխկապակցված բնույթ են կրում, ըստ այդմ, դրանց ընդհանուր վերլուծությունը ներկայացվում է **առաջին ենթագլխով**, հայ և օտար ուսումնասիրողների առաջադրած տեսությունների քննարկմամբ: Առանձնակի քննարկվում է Ժ. Դյումեզիլի բացահայտած այն հիմնականախթը, որի շուրջ ձևավորվել է «Քյոռոզլի» էպոսը, այն է՝ Հերոդոտոսի երկում (Ք. ա. V դ.) պահպանված սկյութական առասպելը, հայկական «Պարսից պատերազմ» հերոսավեպը ևն: Քննվող սկյութական, հայկական և թուրքական (թյուրքական) տարբերակներում հայրերի կուրացման պատիժը կապված է ձիաբուծության հետ, ինչը որ, սակայն, առավել հստակ ու տրամաբանական է ներկայացված Արշակ Բ-ի պատմության մեջ: «Պարսից պատերազմի» և «Քյոռոզլի» էպոսի միջև Դյումեզիլը մի շարք հետաքրքրական համանմանություններ է նշում, ի վերջո, հնարավոր համարելով դրանց ընդհանուր կապը³⁴: Դյումեզիլի տեսությունը ժամանակին զարգացվել է ֆրանսահայ բանասերներ Հ. Պերպերյանի³⁵ և Ս. Ախյանի³⁶,

³⁴ Dumézil G., Les légendes de “Fils d’aveugles” au Caucase et autour du Caucase: “Revue de l’Histoire des Religions”, Vol. 117, Paris, 1938, pp. 50-74.

³⁵ Պերպերյան Հ., Արշակ Բ. եւ Քեռոզլու, Փարիզ, 1938:

³⁶ Ախյան Ս., Կույր հոր ու իր տառապյալ որդիների առասպելական թեման և Քյոռոզլին, ԲԵՇ, թիվ 3 (93), Երևան, 1997, էջ 148-153:

ինչպես նաև այլ ուսումնասիրողների կողմից (Ա. Պետրոսյան³⁷, Ռ. Մելքոնյան³⁸), որոնք ևս նշել են որոշ էական համանմանություններ: Ենթազգլխում ներկայացվում են համապատասխան նյութեր, որոնք համեմատվում և վերլուծվում են էպոսի տարբերակների հետ:

Երկրորդ ենթազգլխում ներկայացվում են «Քրոսոլի» էպոսի գործող անձանցից Քաչալ Համզայի կերպարի վերլուծության արդյունքները՝ հաշվի առնելով թուրքական պատումներում նրան հայկական ծագում վերագրելը, «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումներում և բանահյուսական այլ նյութերում միևնույն կերպարի առկայությունը: Ակնհայտ է Համզայի հիմնական դերակատարությունը «Քրոսոլու» տարբեր պատումներում, այն է՝ Քրոսոլու ձիու առևանգիչ և հակառակորդին հանձնող, ինչով զլխավոր հերոսին հասցվում է զգալի հարված, հակառակորդի լրտես-գործակալ Քրոսոլու խմբում:

Հաշվի առնելով Ժ. Դյումեզիլի տեսությունը «կոյրի որդու» առասպելային տարածվածության, դրա շրջանակներում «Պարսից պատերազմ» հերոսավեպի և «Քրոսոլու» էպոսի միջև առանցքային տարրերի ու առասպելային բնորոշ հիմնականաբար առկայությունը՝ Քաչալ Համզայի կերպարը լիովին համեմատելի է միևնույն դերակատարությամբ հանդես եկող կերպարների հետ, այն է՝ Փիսակ Սյունի և Բզնունյաց նահապետ Դատաբեն (Դատաբա կամ Դատաքե): Փաստացի ևս մեկ կովան է ի հայտ գալիս «Քրոսոլիում» Դյումեզիլի առաջադրած «կոյրի որդու» առասպելային հաստատման համար: Հավանական է, որ «Պարսից պատերազմից» սերելով՝ հետագայում «Սասնա ծռերին» անձանոթ և ոչ բնորոշ այս կերպարը (Քաչալ Համզա, Լոռա Համզե ևն) ներմուծվել է «Քրոսոլի» էպոսից:

Երրորդ ենթազգլխում ներկայացվում և վերլուծվում է վաճառականի (Բեզիրգեն) կերպարը, էպոսի արևմտյան և արևելյան տարբերակներում նրա հետ կապված բնորոշ դրվագը, ընդամին, վաճառականին հիմնականում վերագրվում է հայկական ծագում: Ակնհայտ է, որ XVI-XVII դդ. տարածաշրջանում հայ վաճառականության խաղացած նշանակալից դերակատարությունը և ջալալիական ապստամբությունների ընթացքում արձանագրված պատմական իրողություններն էպոսում արտացոլվել են հայ վաճառականի կերպարի և համապատասխան դրվագի ճանապարհով:

Չորրորդ ենթազգլխում վերլուծվում, համադրվում և ներկայացվում են Քրոսոլու որդեգիր Այվազի կերպարը, նրա առևանգման դրվագը,

³⁷ **Պետրոսյան Ա.**, Հայկական էպոսի հնագույն ակունքները (հնդեվրոպական առասպելներ և պատմական նախատիպեր), Երևան, 1997, էջ 42:

³⁸ **Մելքոնյան Ռ.**, Քրոսոլու էպոսի հայկական հիմքերի շուրջ, ԵՊՀ, Արևելագիտության հարցեր, թիվ 10, Երևան, 2015, էջ 170-175: Թեմայի վերաբերյալ տե՛ս նաև **Russell J.**, From Parthia to Robin Hood: The Epic of the Blind Man's Son. The Embroidered Bible: Studies in Biblical Apocrypha and Pseudepigrapha in Honour of Michael E. Stone. Leiden, Netherlands, Brill, 2017, pp. 877-898.

համապատասխան պատմական վկայությունները, թուրքական և այլ բանահյուսական նյութերը: Ընդ որում, եթե արևմտյան խմբում Այվազին հիմնականում վերագրվում է հայկական ծագում, ապա արևելյան խմբի պատումներում այն հիմնականում փոխարինվել է կովկասյան ծագմամբ:

Հինգերորդ ենթագլխում քննարկվում է Հայոց թագավորի կերպարը 1990-ական թթ. Ադանայի շրջանում գրառված տարբերակից, որում առկա է որևէ այլ տեղ չհանդիպող ամբողջական գլուխ՝ «*Քյոոզլու Հայաստանի արշավանքը*»: Նկարագրվում է Քյոոզլու պատերազմը հայերի դեմ, Հայոց թագավորի գերեվարումը, ինչը պետք է որ տեղական պատմական իրողությունների արգասիք լինի: Պատումն իր բովանդակությամբ աննախադեպ է, արդի թուրք բանասիրության համար՝ անբացատրելի: Էպոսի թուրքական պատումներում հանդիպում են հայազգի կերպարներ, որոնց բացասական գծեր են վերագրվում, մինչդեռ տվյալ դեպքում խոսքը հայկական պետականության և Հայոց թագավորի դեմ պայքարի մասին է: Քյոոզլուն վերագրվում է, իբր, մահմեդական թուրքերի նկատմամբ հայերի իրագործած «զուլումներից» վրեժխնդիր անձնավորության դեր:

Հայոց թագավորի կերպարն իր հերթին նորություն չէ թուրքական և, ընդհանրապես, թյուրքական վիպական ավանդության համար՝ հաշվի առնելով նվազ հայտնի Հայոց թագավոր Թավամազ Օհանի կերպարն «*Անիի ստասպելից*»³⁹ և օղուզների հակառակորդ Թագավորի կերպարը «*Դեդե Քորքույթ*» էպոսից: Նմանապես քննարկվում է Օլթիի շրջանում վերջերս գրառված «Քյոոզլու» մեկ այլ թուրքական պատում, որում առկա է Օլթիի կառավարիչ Հայ գորավարի (Ermeni Paşa) կերպարը⁴⁰:

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Քյոոզլի» էպոսի ուսումնասիրության համար առաջնահերթ նշանակություն ունեն օսմանյան պետական գրագրության փաստաթղթերը և XVII-XVIII դդ. հայ պատմագրության հաղորդած տեղեկությունները: Հայկական աղբյուրները ոչ միայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում, այլև թույլ են տալիս պատասխանել էպոսին առնչվող բազմազան հարցերի:

2. Ներկա ուսումնասիրությամբ շրջանառության մեջ են դրվում նոր և լրացուցիչ պատմագեղարվեստական արձագանքներ, որոնց հիմնվելով՝ բացահայտվում է էպոսի զանազան տարբերակներում արտացոլված դրվագների պատմական հիմքը:

3. XIX-XX դդ. էպոսը բավական տարածված է եղել հայկական շրջանակներում, պատմագեղարվեստական արձագանքները դրսևորվել են

³⁹ **Belli O.**, Ani Şehri'nin Yıkılış Efsanesi (Kılı Ohan Efsanesi): Uluslararası Ani-Kars Sempozyumu 14-16 Ağustos 2014, Kafkas Üniversitesi, İlk Basım 2016, İstanbul, ss. 297-299.

⁴⁰ **Taşhova M.**, Köroğlu Oltu Kolu (İnceleme-Metinler). Ankara 2016, ss. 408-409.

էպոսի հայկական տարբերակների և պատումների, գրական մշակումների, աշուղական փոխադրությունների միջոցով, հայ գրականության և երաժշտության մեջ ակնառու անդրադարձներով: Գրական մշակումները և աշուղական փոխադրությունները նպատակ էին հետապնդում հայացման ու թարգմանության ճանապարհով մեղմել և հեռացնել օտարամուտ ազդեցությունը հայության լայն շրջանակներից:

4. Էպոսի ոչ միայն հայկական, այլև թուրքական զանազան՝ առավելապես նախկին հայկական ու հայաբնակ տարածքներում գրառված տարբերակներում նկատելի հայոց վիպական տարրերի ու ավանդությունների ազդեցությունը (այդ թվում՝ հայագգի կերպարների և որոշ դրվագների առկայությամբ) ակնբախտրեն վկայում է անգամ ուշ միջնադարում Հայկական լեռնաշխարհում ժողովրդագրական և ազգագրական դիմագծի փոփոխություններից հետո հայոց վիպական ավանդույթի կենսունակության մասին:

5. Թեև էպոսն ուշ միջնադարի ստեղծագործություն է, սակայն պարփակում է բազմաթիվ վաղնջական շերտեր ու հնագույն առասպելաբանական տարրեր, որոնցից ցայտուն են արտահայտված «կույրի որդու» առասպելույթը և ծիու պաշտամունքը: Ընդ որում, հայկական և ընդհանուր հնդեվրոպական առասպելաբանական տարրերի ներմուծումը թուրքական և մասամբ թյուրքական վիպական ավանդույթի մեջ իրականացվել է «հայկական խողովակներով»:

6. Ժ. Դյումեզիլի առաջադրած «կույրի որդու» առասպելույթի հիմնականախըը համանման տարրերով է դրսևորվում «Պարսից պատերազմ» հերոսավեպում և «Քյոռօղլու» արևմտյան խմբի հիմնական տարբերակներում՝ ակնհայտ դարձնելով ծագումնաբանական կապը:

7. Հանձինս «Քյոռօղլի» էպոսի որոշ տարբերակներում հայկական ծագում ունեցող Քաշալ Համզայի և «Պարսից պատերազմ» հերոսավեպում նրա բացահայտ վիպական նախորդ Փիսակ-Դատաբենի կերպարների՝ ևս մեկ հավելյալ կռվան է ի հայտ գալիս «կույրի որդու» առասպելույթի առկայության հաստատման համար:

8. Թուրքմենական ցեղերի երկկողմ միգրացիայի հաշվառմամբ ենթադրելի է, որ բուն Հայկական լեռնաշխարհում տարածված վիպական սյուժեները Կենտրոնական Ասիա են հասել «թուրքմենական խողովակներով»: Ընդամին, ընթացել է երկկողմ փոխհարստացման գործընթաց, ինչի արդյունքում «Քյոռօղլի» էպոսից «Սասնա ծռերի» զանազան պատումներ են ներմուծվել որոշ կերպարներ:

9. Վաճառականի կերպարը և համապատասխան դրվագը կայուն տեղ են գրավում «Քյոռօղլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, որոնցում վաճառականին հիմնականում վերագրվում է հայկական ծագում: Միևնույն կերպարն ու բնորոշ դրվագն իրենց անդրադարձն են գտել էպոսի նաև արևելյան խմբի հիմնական տարբերակներում, որոնցում վաճառականի

հայկականությունը փոխարինվել է ընդհանուր կովկասյան ծագմամբ: Վաճառականի կերպարի և համապատասխան դրվագի ճանապարհով արտացոլվել են XVI-XVII դդ. տարածաշրջանում հայ վաճառականության խաղացած նշանակալից դերակատարությունը և ջալալիական ապստամբությունների ժամանակահատվածում արձանագրված պատմական իրողությունները:

10. Որդեգրի կերպարը և նրա առևանգման դրվագը կայուն տեղ են գրավում էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, որոնցում նրան հաճախ վերագրվում է հայկական ծագում: Մինևույն կերպարն ու բնորոշ դրվագն իրենց անդրադարձն են գտել էպոսի արևելյան խմբի տարբերակներում: Այդ ճանապարհով էպոսում արտացոլվել են XVI դ. վերջին և XVII դ. սկզբին ջալալիական ապստամբությունների ժամանակահատվածում արձանագրված պատմական իրողությունները, մասնավորապես, տարածաշրջանի հայ բնակչության շրջանում ջալալիների իրականացրած մանկահավաքները (ղևջիրմե) և այլ բռնի գործողությունները:

11. էպոսի, հատկապես, թուրքական տարբերակներում արտացոլվել է նաև պատմական Հայաստանի տարածքների աստիճանական նվաճումը: Ընդհանրապես, թուրքական վիպական ավանդության մեջ որոշակիորեն կերպավորվել է Հայոց թագավորի կերպարը, ինչը դիտարկվում է «Դեդե Քորքու» էպոսում, թուրքական ավանդագրույցներում և տեղական բնույթ կրող «Քյոռուղլու» պատումներում:

12. «Քյոռուղլի» էպոսի պատմականության և հայկական ենթաշերտի ուսումնասիրության հարցերն առկա և նորահայտ նյութերով չեն սպառվում: Նոր տվյալների հրապարակումը հիմք կարող է ծառայել հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Ռամազյան Ս.**, Քրոնոլի (հոդվածաշար 5 մասից), «Իրան-Նամէ» արևելագիտական հանդես, թիվ 20-21, 22-23, 24-25, 26-28, 29-31, Երևան, 1996-1998 թթ.:
2. **Рамазян С.**, Тюркская эпическая традиция и Армения (на примере огузо-туркменского эпоса “Горкут Ата” и “Гёр-оглы”): “Тамыр”, No 7 (апрель-июнь), сс. 32-35, Алматы, 2002.
3. **Ռամազյան Ս.**, Որդեգրի կերպարը «Քրոնոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Արևելագիտության հարցեր, թիվ 13, էջ 272-311, Երևան, 2017:
4. **Ռամազյան Ս.**, «Քրոնոլի» էպոսի պատմականության ուսումնասիրության հարցերը և XVII դ. հայ պատմագրությունը, Արևելագիտության հարցեր, թիվ 14, էջ 56-94, Երևան, 2018:
5. **Ռամազյան Ս.**, «Քրոնոլի» էպոսի պատմական հենքը և XVII-XVIII դդ. հայերեն ժամանակագրությունները, Բանբեր Մատենադարանի, թիվ 25, էջ 277-290, Երևան, 2018:
6. **Ռամազյան Ս.**, Ձիու կերպարը «Քրոնոլի» էպոսում և դրա առասպելաբանական հիմքերը, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, «Կանթեղ», թիվ 2 (75), էջ 25-39, Երևան, 2018:
7. **Ռամազյան Ս.**, Վաճառականի կերպարը «Քրոնոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2 (653), էջ 205-219, Երևան, 2018:
8. **Ռամազյան Ս.**, «Քրոնոլի» էպոսի պատմականության ուսումնասիրության հարցերը և XVIII դ. հայ պատմագրությունը, Արևելագիտության հարցեր, թիվ 16, էջ 120-152, Երևան, 2019:

РАМАЗЯН САМВЕЛ МАРТУНОВИЧ
ЭПОС “КЕРОГЛЫ” И АРМЯНСКИЕ ИСТОРИКО-ХУДОЖЕСТВЕННЫЕ
ОТГОЛОСКИ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – “Зарубежная литература”. Защита диссертации состоится 4-го июля 2022 г. в 14:30, на заседании специализированного совета 066 ВАК (“Зарубежная литература”), действующего в Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, ул. А. Манукяна 1 (7-й корпус ЕГУ, факультет европейских языков и коммуникации, аудитория 422).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию армянских историко-художественных отголосков эпоса “Кёроглы”, рассматриваются соответствующие отголоски XVII-XVIII вв. и XIX-XX вв. (в т.ч. сообщения армянской историографии об исторических прототипах главных персонажей эпоса, а также о разных исторических событиях, которые отражены в эпосе).

Актуальность исследования. Основные исторические события, которые легли, особенно, в основе западных версий эпоса, касаются джелалийским восстаниям в Османской империи конца XVI в. и начала XVII в. Восстания имели тяжёлые последствия для народов империи, особенно, для армянства. Имея многовековую стабильную традицию, армянская историография сохранила важные и уникальные сведения о джелалийских восстаниях. Следовательно, изучение темы предполагает необходимость с точки зрения представления важности и уникальности армянских историко-художественных отголосков.

Тема актуальна для всеобщего и всестороннего изучения эпоса. В результате исследования армянских историко-художественных отголосков выявляются новые различные факты, посредством которых создается возможность для более глубокого изучения темы и детального освещения различных вопросов. С другой стороны, однозначно опровергаются антинаучные тезисы, особенно, турецко-азербайджанских кругов, якобы, о несуществовании армянской версии эпоса и “*влияния турецкой народной литературы*” в отношении армянской культуры, которые в последнее время распространяются, по всей видимости, в рамках всеобщего расширения антиармянской пропаганды.

Цель и задачи исследования - на основании имеющихся материалов представить армянские историко-художественные отголоски, в т.ч. в отношении исторических прототипов (Кёроглы, Гзироглы Мустафа, Коса Сафар и др.) и разделов эпоса, а также сопоставить и сравнивать соответствующие материалы. Исходя из вышеизложенного, мы поставили следующие задачи:

-Представить сообщения армянской историографии XVII-XVIII вв. в отношении вопросов изучения эпоса, армянские историко-художественные отголоски в целом;

-Сопоставить их с доселе известными материалами османских государственных архивов и других источников;

-Рассматривать проявления армянского влияния в формировании эпоса через армянских персонажей и отдельных эпизодов;

-Обосновать неопровержимое существование армянской версии (версий) в сочетании с имеющимся историческим и художественным материалом;

-Выявить место и роль армянских историко-художественных отголосков в изучении эпоса в целом.

Научная новизна исследования заключается в том, что впервые всестороннее и полностью представляются армянские историко-художественные отголоски “Кёроглы”, важность которых подчеркивается с точки зрения изучения эпоса. В диссертации использовано большое количество первоисточников и различных материалов, которые впервые введены в научный оборот или рассматриваются в новом свете.

Практическая ценность работы - в выявлении и привлечении новых исторических, литературоведческих, филологических материалов, которые могут быть использованы при изучении эпоса в дальнейших исследованиях, а также в курсе лекций по восточной (тюркской) литературе.

Методология работы. Диссертация составлена с использованием историко-сравнительного, аналитико-сопоставительного методов исследования имеющихся историографических и фольклорных материалов, что предполагает комплексный исследовательский анализ с соответствующими выводами.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка литературы.

Во **Введении** представлена история изучения вопроса и необходимость панорамного исследования армянских историко-художественных отголосков.

Первая глава – “Эпос “Кёроглы” и армянские историко-художественные отголоски XVII в.” – имеет 5 подраздела и посвящена рассмотрению историко-художественных отголосков данного периода. Особенную важность представляют труды армянских историков XVII в. Аракела Даврижеци, Григора Даранагци (Камахеци) и Еремия Кеомурчяна, также мелкие хроники того же периода.

Вторая глава - “Эпос “Кёроглы” и армянские историко-художественные отголоски XVIII в.” – имеет 3 подраздела, рассматриваются сообщения источников данного периода. В особенности, Егиа Мушегян (Элиас Мушегян) передает сведения как о главном персонаже, так и об некоторых характерных сюжетах эпоса.

Третья глава - “Эпос “Кёроглы” и армянские историко-художественные отголоски XIX-XX вв.” – имеет 4 подраздела и посвящена рассмотрению армянских версий, художественных и ашугских изложений (переводов), отголосков в армянской литературе и музыке.

Четвертая глава - “Армянское влияние в контексте историко-художественных отголосков” – имеет 5 подраздела. Рассматривается армянское влияние в эпосе, проявляющееся наличием элементов армянской эпической традиции, армянских персонажей (Безирген-купец, Айваз, Кечел Хамза, Армянский король). Также рассматриваются некоторые архаические пласты и древние мифологические элементы, вошедшие в эпос по армянским каналам.

В **Заключении** подводятся научные выводы исследования.

Работа состоит из 237 страниц.

SAMVEL RAMAZYAN
THE EPIC OF “KOROGLU” AND ARMENIAN HISTORICAL-ARTISTIC
ECHOES

Dissertation for obtaining Philological sciences degree, in the specialty 10.01.07 - "Foreign Literature". The defense of the thesis will take place on July 4, 2022 at 14:30, at the HQC of RA's Specialized Council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Alex Manoogian st. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, Room No 422).

SUMMARY

The research is devoted to the study of the Armenian historical-artistic echoes of the epic “Koroglu” (“Korogly”, “Keroglu”), also the corresponding echoes of the 17th-18th centuries and 19th-20th centuries are considered (including reports of Armenian historiography about historical prototypes of the main personages of the epic, as well as about various historical events that are reflected in the epic).

The modernity of the theme

The bases of the historical events in the epic of “Koroglu” generally concerns the Jelali Revolts (Celali Rebellions) in the Ottoman Empire at the end of the 16th century and the beginning of the 17th century. Having a centuries-old stable tradition, the Armenian historiography saved important and unique information about these historical events, also about the leaders of Jelali, the historical prototypes of the epic. Therefore, the study of the topic creates a necessity from the point of view of presenting the importance and uniqueness of Armenian historical and artistic echoes.

The topic is relevant for the universal and comprehensive study of the epic. As a result of the study of Armenian historical and artistic echoes, various new facts are revealed, through which an opportunity is created for a deeper study of the topic and detailed coverage of various issues. On the other hand, the anti-scientific theses of Turkish-Azerbaijani circles, allegedly about the non-existence of the Armenian version of the epic and the “*influence of Turkish folk literature*” on Armenian culture are unequivocally refuted.

The purpose and objectives of the study are to present Armenian historical and artistic echoes based on the available materials, including in relation to historical prototypes (Koroglu, Kiziroglu Mustafa, Kosa Safar etc.) and sections of the epic, as well as to compare the relevant materials. Based on the above, we have set the following objectives:

-To present the reports of the Armenian historiography of the 17th-18th centuries with regard to the study of the epic, Armenian historical and artistic echoes in general;

-Compare them with hitherto known materials from the Ottoman state archives and other sources;

-To consider the manifestations of Armenian influence in the formation of the epic through Armenian personages and some episodes;

-To substantiate the irrefutable existence of the Armenian version (versions) in combination with the available historical-artistic material;

-To identify the place and role of Armenian historical-artistic echoes in the study of the epic as a whole.

The scientific novelty of the research lies in the fact that for the first time the Armenian historical-artistic echoes of “Koroglu” are presented comprehensively and completely, the importance of which is emphasized from the point of view of studying the epic. The research uses a large number of primary sources and various materials that have been introduced into scientific circulation for the first time or are viewed in a new light.

The practical value of the research is in identifying and attracting new historical, literary, philological materials that can be used in the study of the epic in further researches, as well as in a course of lectures on Eastern (Turkic) literature.

The methodology of the research

The research was compiled using historical-comparative, analytical-comparative methods of research of available historiographical and folklore materials, which implies a comprehensive research analysis with relevant conclusions.

The structure of the research

The research consists of Introduction, 4 (four) chapters, Conclusions and the List of literature used.

The Introduction presents the history of the study of the issue and the need for a panoramic study of Armenian historical-artistic echoes.

The First Chapter (“The Epic of “Koroglu” and the Armenian historical-artistic echoes of the 17th century”) includes 5 subchapters and is devoted to the consideration of historical-artistic echoes of that period. The particular importance in the studying of the epic presents the works of Armenian historians of the 17th century Arakel Davrizhetsi (Arakel of Tabriz), Grigor Daranaghtsi (Kamakhetsi) and Eremia Komurjian (Jeremiah Keomurjian), also small chronicles of the same period.

The Second Chapter (“The Epic of “Koroglu” and the Armenian historical-artistic echoes of the 18th century”) includes 3 subchapters, the reports of the sources of this period are considered. In particular, Armenian historian of the 18th century Elias Mushegian (Yeghia Musheghian) transmits information about the main personage of the epic, as well as about some historical events which are reflected in the epic.

The Third Chapter (“The Epic of “Koroglu” and Armenian historical-artistic echoes of the 19th-20th centuries”) includes 4 subchapters and is devoted to the consideration of Armenian versions, artistic and Ashugh (Ashik) translations, echoes in Armenian literature and music.

The Fourth Chapter (“Armenian influence in the context of historical-artistic echoes”) includes 5 subchapters. The Armenian influence in the epic is considered, manifested by the presence of elements of the Armenian epic tradition, Armenian personages (Bezirgen the merchant, Ayvaz, Kechel Hamza, Armenian king). Some archaic layers and ancient mythological elements that entered through “Armenian channels” are also considered.

In the **Conclusions** the main outcomes of the research are presented.

The research consists of 237 pages.



